ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

10.04.2023 թվականին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-23/34-1 գնման պայմանագրի

ք. Երևան «08» 05 2023թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ Բ. Սեդրակյանի, ով գործում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Նունե Մովսիսյան Ա/Ձ-ը, ի դեմս տնօրեն Ն. Մովսիսյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 10.04.2023թ. կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-23/34-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի Հավելված N1-ով սահմանված մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացույցային օրով՝ համապատասխանաբար ժամկետը խմբագրել և ներկայացնել հետևյալ շարադասությամբ՝ «Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում»:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | Նունե Մովսիսյան Ա/Ձ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 | ՀՀ, ք. Երևան, Շարուրի 37 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, «Շենգավիթ» մ/ճ |
| Հ/Հ 1570083324940100 | Հ/Հ 2051032020861001 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 76820929 |
| գլխավոր տնօրենի ժ/պ __________ Բ. Սեդրակյան | տնօրեն __________ Ն. Մովսիսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |